ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189"29-րդ հոդվածով.

«Հոդված 189"29. Բարձրագույն կրթության բնագավառում օրենսդրության պահանջները խախտելը

1. Օրենսդրությամբ սահմանված հիմնական պրոֆեսորադասախոսական կազմին կամ մանկավարժներին կամ ուսումնական տարածքին կամ լաբորատոր կամ ուսումնամեթոդական ապահովվածության կամ գրադարանային-տեղեկատվական համակարգին կամ ուսումնաարտադրական պրակտիկայի բազային ներկայացվող պահանջները կամ լիցենզավորման կարգով նախատեսված այլ պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության կողմից լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող՝ օրենքով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը 10 օրվանից ավելի ժամկետով խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության ներկայացրած հայտի հիմքով իրեն հատկացված սովորողների (ըստ կուրսերի) նախատեսվող սահմանային թիվը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով չափով:

4. Մեկ ուսումնական տարվա ընթացքում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից օրենքով նախատեսված հիմքերով երկրորդ անգամ նախազգուշացվելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրաապատիկ չափով:

5. Օրենքով նախատեսված խախտման համար պետական կառավարման լիազոր մարմնի կիրառած նախազգուշացմամբ սահմանված ժամկետներում այդ խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

6. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով-:

~~7. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երրորդ և ավելի անգամ կատարելը՝~~

~~առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:~~

8. Սույն հոդվածովի 2-5-րդ մասերով ~~(բացառությամբ 1-ին մասի)~~ սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածով սահմանված տուգանքի չափերի կրկնապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 244.2~~3~~4-րդ հոդվածով.

«Հոդված 244.2~~3~~4. Կրթության բնագավառի նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսաչական մարմինը

1.Կրթության բնագավառի նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի ~~182.7-րդ և~~ 189"29-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2" Սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: